

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
4րդ. Տարեդարձ ՕԾՄԱՆ



# Զօն

Սրտագին հրճուանքով Սուրբ Ֆիլատելֆիոյ Ս. Երրորդութիւն համայնքը կը միանայ ջերմ բարեմաղթանքները նորակառոյց Ս. Եկեղեցւոյս ՕԾՄԱՆ չորրորդ և Ամերիկահայոց բարեխնամ Առաջնորդին Գեր. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի քահանայական Ձեռնադրութեան 30րդ երջանիկ առիթները:

ՇԱԲԱԹ-ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏ. 12-13-1970
SATURDAY. SUNDAY. DEC. 12-13-1970
HOLY TRINITY ARMENIAN CHURC
Cheltenham, Pa.

30-ամեակ Սուրբեալ Ծառայութեան



Նորընծայ Եկեղեցականը ապագայի լուսաւոր խոր-
հուրդներով լեցուն:



"Սիոնի որդիք զուարթիք"
Մկրտութիւն Յորդանան
գետին մէջ:

Նորընծային անդրանիկ
դաշտը՝ Ն. Ֆիլատելֆիոյ
մեր հին եկեղեցին ուր
սկսան պտուղ տալ
նուիրեալ ճիգերը մեր հովիւին:



"Արժանի է մշակն վարձու իւրոյ"
(Ղուկ. Ժ. 7.)










"Ով իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն
Երանի իցէ ծառային այնմիկ զոր
եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ
այնպէս" (Ղուկ. ԺԲ. 42.)

# Կենսագրական

Ամերիկահայոց Առաջնորդը, Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան ծնած է Պաղտատ 1919ին եւ մկրտուած Աւետիք: 1931ին ընդունուած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանը ուրկէ շրջանաւարտ ըլլալով 1939ին սարկաւագ եւ քահանայ ձեռնադրուած է ձեռամբ Երանշ. Տ. Թորգոմ եւ Տ. Մեսրոպ Պատրիարքներու:

Ս. Յակոբեանց վանքէն ներս իր սկզբնական ծառայութիւնները տալէ ետք երիտասարդ տարիքին Թորգոմ վարդապետ Միացեալ Նահանգներ կուգայ 1946ին եւ կը նշանակուի հովիւ մեր համայնքին, Նորթ Ֆիլատելֆիոյ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ: Իր այս անդրանիկ դաշտին մէջ իսկոյն կը ծաղկին եւ պտղառատ կը դառնան նուիրեալ, աշխոյժ եւ տաղանդաւոր ճիգերը երիտասարդ հոգեւորականին:

Համայնքէս ներս նոր թափ կը ստանան եւ յարաճուն կերպով վերելք կ'արձանագրեն եկեղեցական բոլոր կազմակերպութիւնները Տիկնանց, երիտասարդաց, ինչպէս նաեւ դպրաց դասն ու հայ լեզուի ու կիրակնօրեայ վարժարանները:

Եկեղեցական պաշտամունքները, դպրաց եւ սարկաւագաց բաժինները կը դառնան անմիջական հոգածութեան առարկայ եւ հովիւին տաղանդաւոր ճպոտին ներքեւ վերստին կը պայծառանան թէ հոգեւոր եւ թէ ազգային երաժշտութիւնը համայնքէս ներս: Յիշատակութեան արժանի են Դպրաց Դասու եւ Թորգոմեանց երգչախումբի կազմութիւնն ու երաժշտական յաջողագոյն ելոյթները հոգեշնորհ հովիւի ղեկավարութեանը ներքեւ:

Շրջան մը Առաջնորդական փոխանորդի պաշտօնը վարելէ ետք 1956-60 կը վերադառնայ Երուսաղէմ ուր կը կարգուի տեսուչ Ժառանգաւորաց-Ընծայարանին որմէ ետք վերադառնալով Միացեալ Նահանգներ երկու տարի ուսման կը հետեւի Գէյմպրիճի Եպիսկոպոսական ճեմարանին մէջ:

1962ին Թորգոմ Վրդ. Մանուկեան կ'ընտրուի Առաջնորդ Գալիֆորնիոյ թեմին եւ Նորին Ս. Օծութիւն Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կը ձեռնադրուի եպիսկոպոս: Չորս տարուան արդիւնաւոր գործունէութիւն մը կ'արձանագրէ Արեւմտեան թեմէն ներս:

1966ին Թորգոմ Սրբազան կ'ընտրուի Առաջնորդ Ամերիկայի Երեւելեան թեմին եւ չորս տարուան օգտակար իր գործունէութիւնը պատճառ կ'ըլլայ որ ինք վերընտրուի նոյն պաշտօնին 1970ին, 68րդ Թեմական Պատգամաւորական ժողովին կողմէ:

Ս. Վարդան Մայր Տաճարի օծման օրը, Ապրիլ 1968ին, Ազգիս Սրբազնագոյն Հայրապետը Վազգէն Ա. Թորգոմ Սրբազանի կը շնորհէ Արքութեան պատիւ իբր վարձատրութիւն իր բազմօգուտ ծառայութեանց:

# Biography

The Primate of the Armenian Diocese of North America, His Grace Archbishop Torkom Manoogian was born in Baghdad, Iraq, in 1919 and was christened Avedis. In 1931 he entered the Theological Seminary of the Armenian Patriarchate of Jerusulem, and in 1935 was ordained a deacon by the Patriarch Torkom of Jerusalem. In 1939 upon graduation he was ordained to the priesthood by Patriarch Mesrob of Jerusalem.

During his stay at the monastery, Father Torkom served as Director of the Publications and was a member of the editorial staff of "Sion", the official publication of the Patriarchate.

The Very Rev. Torkom Manoogian arrived in the United States in 1946 and until 1951 he served as pastor of the Holy Trinity Armenian Church of North Philadelphia. During his stay in Philadelphia, as his first parish Father Torkom organized and directed the many organizations affiliated to the parish: Ladies and youth groups, choir and choral group. It is worth mentioning the Torkomiantz Choral Group, organized and directed by the talented pastor which proved several successful performances in Philadelphia and in New York.

During 1956-60 Father Torkom served as the Dean of the Seminary in Jerusalem. Upon his return to the United States he entered the Episcopal Theological Seminary in Cambridge, Massachusetts to further his studies.

In 1962 Rev. Manoogian was elected Primate for the Western Diocese in California, where he served with vigor and dedication. He was consecrated a Bishop by His Holiness Vazken I of All Armenians in 1962 upon his election as Primate.

In 1966 the Eastern Diocesan Assembly of New York elected Bishop Torkom Manoogian as the Primate of the Eastern Diocese of the Armenian Church of North America and Canada. During his first term the Primate was able to reach the many needs of the various phases of the Diocese, especially to organize the consecration of St. Vartan Cathedral in April 1968 and the subsequent functioning of the Cathedral and Diocese headquarters.

In 1970 the Primate who was given the title of Archbishop by the Catholicos of All Armenians in 1968, was re-elected to the office of the Primate by the 68th Diocesan Assembly convened here in Cheltenham, Pennsylvania.

Համայնքիս Նորակառոյց Ս. Երրորդութիւն Եկեղեցին
Հիմնարկէք Սեպտեմբեր 1965
Օծում Սեպտեմբեր 1966





••• Եւ 1964 Դեկտեմբեր 1ի չարաղէտ կրակէն կեանքի կոչուեցաւ եկեղեցւոյ նոր շէնքը եւ անոր հովանիին ներքեւ շէնցող համայնքային կեանքը





P A T R O N S

Mr. & Mrs. Alex Alexanian
Mr. & Mrs. Mamas Alexanian
Mr. & Mrs. Harry Andonian
Mr. & Mrs. Aram Attarian
Mr. & Mrs. Azad Attarian
Mr. & Mrs. John Attarian
Mr. & Mrs. Mason Avrigian
Mr. & Mrs. Nazareth Baker
Mr. & Mrs. Sarkis Baldadian
Mr. & Mrs. John Bebirian
Mr. & Mrs. Aram Boornazian
Mr. & Mrs. Avedis Boornazian
Mrs. Yeghsa Boornazian and Daughters
Mr. & Mrs. Michael Chakmakian
Mr. & Mrs. Robert Damerjian
Mr. & Mrs. Philip DerPilbosian
Mr. & Mrs. Michael Dertadian
Mr. Jack C. Goushian

Mr. & Mrs. Mourad Gutchigian
Mr. & Mrs. John Hoplamazian
Mr. & Mrs. Zaven Hovsepian
Mr. & Mrs. Andre Jevardian
Mr. & Mrs. Vartan Javian
Mr. & Mrs. George Kapeghian
Mr. & Mrs. Arsen Kashkashian
Mr. & Mrs. Clement Kashkashian
Mr. & Mrs. Minas Maloumian
Mr. & Mrs. Sarkis Manoogian
Dr. & Mrs. Hrant G. Marcarian
Mr. & Mrs. John Mirakian
Mr. & Mrs. Paul Okoorian
Mr. & Mrs. Sooren Paretchanian
Mr. & Mrs. Martin Parnagian
Mr. Robert Sarkisian
Mr. & Mrs. George Stepanian
Mr. & Mrs. Karnig Thomassian
Mr. & Mrs. Berj Yeretzian